# ՆԿԱՐԱԳԻՐ

**առաջարկվող ապրանքի ամբողջական**

Լենտեքս ՍՊԸ-ն ՀՀՊԾ-ԷԱՃԱՊՁԲ-25/8 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

| Չափաբաժնի համար | Առաջարկվող ապրանքի | | | | |
|---|---|---|---|---|---|
| | ֆիրմային անվանումը | ապրանքային նշանը | մակնիշը | արտադրողի անվանումը | տեխնիկական բնութագիրը |
| 2 | Լենտեքս | Լենտեքս | Լենտեքս | Լենտեքս ՍՊԸ |  բաճկոն` մուգ կապույտ, (44-տոկոսանոց բուրդ, 54-տոկոսանոց պոլիէթիլեն, 2-տոկոսանոց լայկրա) ±3% կտորից, երկարաթև, կոճկվում է կենտրոնական շղթայով, հետևամասը և առաջամասը` վերին կտրվածքով, լանջափեշերի վրա վերևից ուղղահայաց վրադիր գրպաններ են` ուղղանկյուն կափույրներով: Աջ վրադիր գրպանի կափույրի վերևի մասում ամրացվում է «ՊՐՈԲԱՑԻԱՅԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ» անվանումը, իսկ ձախ մասում` պրոբացիայի |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | ծառայողի անվան առաջին տառը և ազգանունը: Կողային գրպանները՝ շեղակի կտրվածքով, շղթայով կոճկվող: Բաճկոնը գոտիով է՝ կողքերից էլաստիկ ժապավենով ձգված: Օձիքը՝ ծալովի: Ուսադիրների շրջանում՝ երկու փակօղակներ և երկու կամրջակներ՝ ուսադիրների ամրացման համար: Ձախ թևի ուսակարից 10 սմ ներքև՝ ամրացվում է պրոբացիայի ծառայության խորհրդանիշը, 9 սմ շառավղով,  տաբատ/կիսաշրջազգեստ (նախապես համաձայնեցնել Պատվիրատուի հետ) • տաբատ՝ մուգ կապույտ (44-տոկոսանոց բուրդ, 54-տոկոսանոց պոլիէթիլեն, 2-տոկոսանոց լայկրա) ±3% կտորից, ուրվագիծը՝ ուղիղ, երկու կողային գրպաններով: Տաբատը՝ դեպի ձախ շղթայով փակվող, գոտին կոճկվում է կոճակ-օղակով, գոտու վրա 6 հատ գոտեմակ օղակներ են, հետնամասում ներկարված, մեկ կոճակով կոճկվող գրպան, • կիսաշրջազգեստ՝ մուգ կապույտ 44-տոկոսանոց բուրդ, 54-տոկոսանոց պոլիէթիլեն, |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | 2-տոկոսանոց լայկրա) ±3% կտորից, ուղիղ կարվածքով, երկկողմանի սեղմոններով, աստառով, գոտին՝ գոտեմակօղերով, հետևամասում՝ բացվածքով, կողամասում կոճկվում է մեկ կոճակով և շղթայով: շապիկ՝ մուգ կապույտ գույնի կտորից՝ (95-տոկոսանոց բամբակ, 5-տոկոսանոց լայկրա) ±3%: Շապիկն արտադրվում է ուղիղ ձևվածքով, կարճաթև, վզամասը մշակված է 2 սմ լայնության տրիկոտաժե մանժետով՝ եզրագծված 4-5 մմ լայնության կրկնակի զարդակարով: Պրոբացիայի ծառայության խորհրդանիշը, պրոբացիայի ծառայողի անվան առաջին տառը և ազգանունը և չափսերը կտրամադրվեն Պատվիրատուի կողմից նախապես ներկայացվող հայտով: |

# ПОЛНОЕ ОПИСАНИЕ

**предлагаемого товара**

ООО Лентекс в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՀՀՊԾ-ԷԱՃԱՊՁԲ-25/8 ниже представляет полное описание предлагаемого им товара.

| Номер лота | Предлагаемый товар | | | | |
|---|---|---|---|---|---|
| | фирменное наименование | товарный знак | марка | наименование производителя | технические характеристики |
| 2 | | | | | |